

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՋՈՐԴ ԵՐԵՒԱՅԻ ԾՆԵՂՅԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

## Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

#### Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

28 սեպտեմբերի 2013 թվականի N 39

#### 8. ԵՐՐՈՐԴ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՋՈՐԴ ԵՐԵՒԱՅԻ ԾՆԵՂՅԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար ընտանիքներին պետական աջակցության տրամադրման 2014 թվականի ծրագրին՝ համաձայն հավելվածի, և այն սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Տ. Սարգսյան

2013 թ. հոկտեմբերի 1  
Երևան

Հավելված  
22 կառավարության 2013 թ.  
սեպտեմբերի 28-ի նիստի N 39  
արձանագրային որոշման

#### ԾՐԱԳՐ

#### ԵՐՐՈՐԴ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՋՈՐԴ ԵՐԵՒԱՅԻ ԾՆԵՂՅԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար ընտանիքներին պետական աջակցության տրամադրման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է Հայաստանի

Հանրապետությունում ծնելիության խթանումը և բազմազավակ ընտանիքների կյանքի պայմանների բարելավումը, ծնողների՝ իրենց երեխայի ապագայի նկատմամբ վստահության ձևավորումը, երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքին տրամադրվող նյութական աջակցության չափի և հասցեականության մեծացումը, որպես ընտանիքի երկարաժամկետ զարգացման, վերարտադրության խթանման և ծնելիության խրախուսման երաշխիք:

2. Ծրագիրն իրականացվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին:

3. Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ երեխա՝** ծրագրի իմաստով ընտանիքում ծնված երեխան երրորդն է կամ դրան հաջորդողը, եթե տվյալ երեխայի ծննդյան օրվա դրությամբ՝ տվյալ ամուսնական զույգի (միայնակ անձի) խնամքի տակ գտնվող, միննույն բնակության վայրում փաստացի բնակվող երեխաները (ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության գորակոչված, ժամկետային զինծառայող և(կամ) ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտ հանդիսացող չամուսնացած զավակները) և (կամ) չամուսնացած չափահաս զավակները, այդ թվում՝ որդեգրած և (կամ) խորթ, առնվազն երկուսն են.

2) **երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներին պետական աջակցություն** (այսուհետ՝ պետական աջակցություն)՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում տվյալ ընտանիքին անկանխիկ եղանակով տրամադրվող ֆինանսական միջոցներ.

3) **պետական աջակցության տնօրինող՝** ընտանիքում ծնված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի հայրը և (կամ) մայրը, կամ երեխաների օրինական այլ ներկայացուցիչը, որը պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի չափահաս բոլոր անդամների գրավոր համաձայնությամբ կարող է տնօրինել ընտանեկան դրամագլուխը՝ մինչև այն երեխայի չափահաս դառնալը, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը.

4) **պետական աջակցության հաշիվ՝** Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ցանկացած բանկում այն երեխայի անվամբ բացված հատուկ հաշիվ, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը և, որին փոխանցվում են պետական աջակցության շրջանակներում, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից տրամադրվող ֆինանսական միջոցները.

5) **ընտանեկան դրամագլուխ (կապիտալ)՝** պետական աջակցության շրջանակներում, երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներին անկանխիկ եղանակով տրամադրվող ֆինանսական միջոցներ, որոնք փոխանցվում են պետական աջակցության հաշվին, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից պետական աջակցության հաշվին փոխանցվող ֆինանսական միջոցները, դրանց վրա հաշվարկված և չպահանջված տոկոսները և այդ ֆինանսական միջոցների մի մասի օգտագործումից հետո պետական աջակցության հաշվում առկա մնացորդը:

4. Ծրագրի համաձայն, 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ընտանիքում ծնված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար տրամադրվող երեխայի ծննդյան միանվագ նպաստի մի մասը ծնողներին/ընտանիքին վճարվում է երեխայի ծննդից հետո, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, իսկ մյուս մասով ձևավորվում է **ընտանեկան դրամագլուխ՝** ըստ ստորև բերված աղյուսակի

	Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը (ՀՀ դրամ)	Երեխայի ծննդյան միանվագ նպաստից վճարվող գումարի չափը (ՀՀ դրամ)	Ընտանեկան դրամագլխի չափը, (ՀՀ դրամ)
Երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում	1.000.000	500.000	500.000
հինգերորդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում	1.500.000	500.000	1.000.000

5. Պետական աջակցությամբ ձևավորվում է ընտանեկան դրամագլուխ:

6. Պետական աջակցության տրամադրման հիմքն ընտանիքում առնվազն երրորդ երեխայի ծնունդն է:

7. Ընտանիքը կարող է ունենալ մեկից ավելի ընտանեկան դրամագլուխ՝ պայմանավորված ընտանիքում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխաների ծննդյան թվով: Այդ դեպքում, յուրաքանչյուր երեխայի համար բացվում է պետական աջակցության առանձին հաշիվ:

8. Ընտանեկան դրամագլխի չափը տարբերակվում է ընտանիքում ծնված երեխաների թվով:

9. Եթե ընտանիքը պետական աջակցության իրավունքը ձեռք է բերում ընտանիքում միաժամանակ մեկից ավելի երեխայի ծնվելու հանգամանքով և ծնված յուրաքանչյուր երեխայի հերթական համարով նախատեսվում է պետական աջակցության տարբեր չափ, ապա անկախ ընտանիքում նրանց հերթական թվից, պետական աջակցությունը տրամադրվում է տվյալ պահի համար սահմանված պետական աջակցության ավելի բարձր չափով:

10. Ընտանեկան դրամագլուխը կարող է տնօրինվել ոչ միայն այն երեխայի համար, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը, այլև պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի մյուս անդամների համար: Ընտանեկան դրամագլուխը, մինչև այն երեխայի չափահաս դառնալը, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը, պետական աջակցության տնօրինողի կողմից կարող է օգտագործվել միայն անկանխիկ եղանակով՝ ըստ հետևյալ ուղղությունների.

1) պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի (կամ այդ ընտանիքի անդամի) համար նոր բնակարանի գնման, կառուցման համար կամ բնակարանի ձեռք բերման նպատակով տրամադրված և հիփոթեքով ապահովված վարկի տոկոսադրույքների և մայր գումարի մարում,

2) պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի անդամի՝ ուսումնական (ուսումնադաստիարակչական) հաստատություններում ուսումնառելու ընթացքում ուսման վարձավճարի վճարում,

3) պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի անդամի՝ բժշկական օգնության դիմաց վճարում և(կամ) առողջության ապահովագրության դասով ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների ապահովագրության նպատակով ապահովագրավճարի վճարում:

11. Ծրագրում նշված ուղղություններից օգտվելու առաջնահերթությունը որոշվում է պետական աջակցության տնօրինողը:

12. Ընտանեկան դրամագլխի վրա հաշվեգրվում են տոկոսներ, որոնց չափը և հաշվարկման կարգը սահմանվում են պետական աջակցության տնօրինողի և բանկի միջև կնքված համապատասխան պայմանագրով: Պետական աջակցության տնօրինողը, պայմանագրով սահմանված ժամկետում, կարող է կանխիկ կերպով ստանալ և տնօրինել ընտանեկան դրամագլխի վրա հաշվարկված տոկոսները: Այդ ժամկետում չպահանջված տոկոսներն ավելանում են ընտանեկան դրամագլխին, որին հավելագրվում են տոկոսներ:

13. Այն երեխայի մահվան դեպքում, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը, ընտանեկան դրամագլուխը վերաձևակերպվում է ընտանիքի այլ երեխայի (զավակի) անունով՝ պետական աջակցության տնօրինողի և ընտանիքի չափահաս անձանց գրավոր համաձայնությամբ:

14. Ընտանեկան դրամագլուխն ամբողջությամբ ենթակա է վերադարձման, եթե այն երեխայի ծնվելուց հետո, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը, պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի անդամներից որևէ մեկի կամ երեխաների օրինական այլ ներկայացուցչի նախաձեռնությամբ ընտանիքում առկա երեխաներից որևէ մեկը տեղավորվել է մանկատանը կամ տրվել է որդեգրման:

15. Այն երեխայի չափահաս դառնալուց հետո, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը, պետական աջակցության հաշվում առկա ընտանեկան դրամագլուխը և դրա վրա հաշվեգրված տոկոսները կարող են անխոչընդոտ տնօրինվել բացառապես տվյալ անձի կողմից՝ սեփական հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման, բացառությամբ օրենքով և բանկի հետ կնքված պայմանագրով նախատեսված սահմանափակումների:

16. Ընտանեկան դրամագլխի տրամադրման կարգն ու պայմանները, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման համար բանկերի հետ կնքվելիք օրինակելի պայմանագրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: